

144. ՀԱՄ ՆԱԼԻՆ, ՀԱՄ ՄԽԻՆ

Մարդ մե, առանց հանդ առնելու, վրա կհտեր.

— Աստծու հետ խավլ իմ դրի, օր տղամարդու ձեն առնիմ՝
չանկըջներսի փակիմ, կնկա-աղջկա չը փնովիմ, վրո մըջման չը
կոխիմ, չըմնօր ժամ էրթամ:

Դրկեց կնիկարմատ մե կը մոտենա:

— Քա՛, լսե՛ր իս, Գրո հարս Սրբուն՝ հըտ ոեսին կը նստի
կանի:

— Չէ՛, ջա՛նըմ:

— Կանանչ մեռոն:

էդ կնիկ կէրթա, աչքով կէնե՛ դրկեց տղամարդ կը մոտենա:
Հըտ աստծուն խավլ էնող՝ կը դառնա ըդոր:

— Լսե՛ր իս:

— Ի՛նչ:

— Գրո հարս Սրբուն՝ հըտ ոեսին կը նստի կանի:

— Օղո՛րդ:

— Թուխմանուկ:

Դրկեց կը թքե ըդոր, կըսե.

— Բերնեբո՛ղ, համ նալին կը դարկիս, համ մխին. թե աստված
քու խավլն ընդուներ՝ ընդրնե միամիտ ու քըղնե լե ալչախ՝ չըր
ճարվի:

¹ Ստոր, վարնոց (Մ. Կ.):

